

## ԱՏՈՂԵՐԿՄԱՆ ՔԱՂՑՄԱՆ ԶՐԵԼ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը. առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը.
- արդյունաբերական հոսքաջրերը.
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները.
- բնակավայրերից վնասակար նյութերը.
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:


Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային. այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով. արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով. ֆենոլներով. ծանր մետաղներով (կապար. կաղմիում. պղինձ. ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ. ներկեր. ձարավեր). որոնք վատրարացնում են ջրի որակը. խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի. խախտվում են ջրային ավագանի կենսաբանական շարժընթացները. նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքրման հատկությունը. փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակի մոնիթորինգ իրականացվել է ազգային ցանցում ընդգրկված 119 դիտակետում, այդ թվում՝ 25 շատրվանող հորատանցք, 35 շատրվանող հորատանցք, 12 գրունտային ջրհոր և 47 բնադրյուր: Դիտակետերում կատարվել են ջրի ծախսի, մակարդակի (Ճնշման) և ջերմաստիճանի չափումներ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

## Հյուսիսային օրակազանային կառավարման տարածք

Հյուսիսային ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգ իրականացվել է 2 բնադրյուրում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ: Դիտակետերը գտնվում են Դիլիջան համայնքի Հաղարձին գյուղում:

N2059 դիտակետում ծախսի տատանումները չնշին են եղել՝ իջեցման միտումով (0.15-0.09 լ/վ), իսկ N2058 դիտակետում տատանումները չնշին են՝ բարձրացման միտումով:



Գծապատկեր 54. Հյուսիսային ԶԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները

## Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյանի ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրավանացվել է 40 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Ախուրյանի ԶԿՏ-ի Արարատյան արտեղյան ավազանի հատվածում՝ Եղեգնուտի, Վարդանաշենի, Տարոնիկի, Ակնաշենի, Ապագայի, Արազափի բոլոր շատրվանող հորատանցքերում նկատվել են ջրի մակարդակների իջեցումներ 0.08-0.73մ-ի սահմաններում:


Ջրառատի N2021 և Ակնաշենի N2001 շատրվանող հորատանցքերում արձանագրվել են ջրի ծախսի բարձրացումներ: Տարոնիկի N2002 դիտակետում նկատվել է կայուն վիճակ, իսկ Ջրառատի N2021 դիտակետում ծախսը հուլիս ամսին դիտվել է 2.09 լ/վ, օգոստոսին նվազել է մինչև 0.71 լ/վ, այնուհետև սեպտեմբերին բարձրացել, հասնելով՝ 2.52 լ/վ: Գայի N1521 դիտակետում նկատվել է ջրի ծախսի թույլ իջեցում 0.1 լ/վ-ով:


Բամբակաշատի և Հայկավանի (N2024, N2025) դիտակետերում նկատվել են ստորերկրյա ջրերի մակարդակի իջեցումներ 0.15մ-ով:

Արարատյան դաշտի նախալեռնային գոտու Արազածավան N2080, Արտենի N2081, Արտամետ N2083 համայնքների դիտակետերում դիտվել են ստորերկրյա ջրերի մակարդակների բարձրացումներ 0.68-1.81մ-ով, իսկ Մյասնիկյանի N2082 դիտակետում՝ մակարդակի իջեցում 0.11մ-ով:


Աշոցքի N2038, N2039, N2040 դիտակետերում և Ցողամարգի N2077 դիտակետում նկատվում են ծախսի ավելացումներ: Ծախսի կայուն վիճակ է դիտվել N2030 դիտակետում: Գյումրի քաղաքի N2037 դիտակետում աղբյուրի ծախսը բարձրանալով՝ սեպտեմբեր ամսին կազմել է 6.92 լ/վ:

Առափի գյուղի N2042 գրունտային ջրհորում ջրի մակարդակը իջել է 0.13մ-ով՝ հասնելով 1.6մ-ի, իսկ Ախուրյանի N2043 գրունտային ջրհորում մակարդակը բարձրացել է հասնելով մինչև 8.39մ-ի:







Գծապատկեր 57. Ախտրյանի ԶԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 58. Ախտրյանի ԶԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 59. Ախտրյանի ԶԿՏ-ի ջշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 60. Ախտորոշականի ԶԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 61. Ախտորոշականի ԶԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները

## Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդանի ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:


Հրազդանի ԶԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում Դաշտավան, Հովտաշատ, Սիս համայնքների N1526, N1523, N2003 դիտակետերում ջրերի ծախսերը նվազել են 0.07-1.04լ/վ սահմաններում, իսկ Ջրահովիտ, Հովտաշեն և Սիս համայնքների N2007, N2008, N1535, N1536 դիտակետերում դիտվել է ծախսի կայուն վիճակ: Մասիսի N1519 դիտակետում շատրվանող հորատանցքում ջրի ծախսը 4.71 լ/վ-ից ավելացել է հասնելով 5.02լ/վ, իսկ Հովտաշենի N2053 դիտակետում՝ 0.06 լ/վ-ից հասել է 0.15լ/վ:


Սիս համայնքի N78, Ջրահովիտի N2004 և Հայանիստի N2005 դիտակետերում դիտվել են ջրի մակարդակի բարձրացումներ 0.02-0.13մ սահմաններում:

Արարատյան դաշտի նախալեռնային գոտու՝ Արագածի N2085, Լեռնամերձի N2088, դիտակետերում դիտվել է ջրի մակարդակների նվազում, իսկ Դողսի N2086 հորատանցքում՝ համեմատաբար կայուն մակարդակ: Փարպիի N2119 հորատանցքում ջրի մակարդակը բարձրացել է 0.44մ-ով:


Հրազդանի ԶԿՏ-ի ք. Երևանի N970 դիտակետում նկատվել է չնշին ավելացում, իսկ Ղազարավանի N755 առյուրի ջրի ծախսը կայուն է՝ 2.9լ/վ:

Կարբի N1636, Բջնի N246, Սոլակի N1297, N1832 դիտակետերում դիտվել են ծախսի իջեցումներ, ամենացարծր ծախսերը եղել են սեպտեմբեր ամսին՝ 5.97լ/վ (N1636), 2.0լ/վ (N246), 6.19լ/վ (N1832) և 0.05լ/վ (N1297): Ապարանի N2051 և N2107 դիտակետերում նույնպես դիտվել են ծախսերի իջեցումներ: Մինչև 0.95մ մակարդակների իջեցումներ դիտվել են Նիգավանի N2010, N2011 դիտակետերում: Բյուրականի N2108 և Բուժականի N2105 դիտակետերում ծախսերը ավելացել են 0.06-0.19լ/վ:







Գծապատկեր 66. Հրազդանի ԶԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 67. Հրազդանի ԶԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները





**Գծապատկեր 68. Հրազդանի ԶԿՏ-ի Հշատրվանող հորատանցքերում օրինակարգակների փոփոխությունները**



**Գծապատկեր 69. Հրազդանի ԶԿՏ-ի գրունտային ջրհորներում օրինակարգակների փոփոխությունները**

## Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Սևանի ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Սևանի ԶԿՏ-ի դիտակետերում դիտվել են ջրի մակարդակների և ծախսերի իջեցումներ:



Ակունքի N31, N902, N1053 դիտակետերում ջրի ծախսերի իջեցումները կազմել են 0.07-62.9լ/վ:

Վարդենիս, Վաղաշեն, Գանձակ, Դարանակ համայնքների N1809, N1810, N1812, N2090, N2013, N2095 շատրվանող հորատանքերում հուլիս ամսից դիտվել են ջրի մակարդակների և ծախսերի իջեցումներ:



Գանձակի N2013 դիտակետում օգոստոս ամսին աղբյուրի ծախսը նվազելով հասել է 0.94լ/վ:

Վարդենիսի N1811, Խաչաղյուրի N2095 դիտակետերում դիտվել են ջրի մակարդակի և ծախսի համեմատաբար կայուն ռեժիմներ:

Լիճքի N2101 հորատանցքում ջրի մակարդակը, իջնելով 0.13մ, կազմել է երկրի մակերևույթից ցածր 1.51մ:



Գծապատկեր 73. Սևանի ԶԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները




## Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Արարատյան ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:


Մալիշկա, Ջերմուկ, Ջեղեա, Վեցուտ և Գառնի համայնքների N502, N2048, N2050, N2060, N2045, N2046, N2047 աղբյուրներում ջրի ծախսերի աճը կազմել են 0.1-18.42լ/վ: Համեմատաբար կայուն ռեժիմ է դիտվել Ազարակաձորի N785 դիտակետում: Գառնիի N845 դիտակետում ջրի ծախսը նվազել է 0.08լ/վ-ով, իսկ Եղեգնաձորի N787 դիտակետում՝ 0.84լ/վ-ով:

Արարատյան դաշտի հարավ-արևելյան հատվածի՝ Արմաշ, Եղեգնավան, Լուսառատ և Արարատ համայնքների N2075, N2065, N2074, N2076, N2064, N2052 դիտակետերում դիտվել են ջրի մակարդակների բարձրացումներ:




Դալար գյուղի N2072 և Արտաշատ քաղաքի N2073 դիտակետերում շարունակվում են գրունտային ջրերի մակարդակների իջեցումները: Արտաշատի N2069, Վեդիի N2006 հորատանքերում նույնպես նկատվել են ջրի մակարդակների իջեցումներ: Սուրենավանի N2067, Արտաշատի N2062, Դալարի N2063 շատրվանող հորատանցքերի դիտակետերում հիմնականում նկատվում են համեմատաբար կայուն ծախսեր:



Գծապատկեր 82. Արարատյան ԶԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 83. Արարատյան ԶԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները





## Հարավային ջրավագանային կառավարման տարածք

Հարավային ԶԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 7 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ:

Սպանդարյանի N537 դիտակետում դիտարկվել է ջրի ծախսերի կայուն վիճակ: Գորայք, Շաքի, Գորիս և Անգեղակող համայնքների N529, N899, N532, N1175 դիտակետերում ջրի ծախսի ավելացումները կազմում են 0.02-0.17լ/վ:

Գորիսի N1399 և Անգեղակողի N1323 դիտակետերում դիտվում է ջրի ծախսերի աննշան իջեցում 0.08-0.21լ/վ:



Գծապատկեր 88. Հարավային ԶԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները